կամ բացատրէ իւր հրաժարականին պատճա-
ռը :

ՕՏԵԱՆ Գ ԷՅ. — Բաւական խօսք չ'ունի
շնորհակալութիւնս յայտնելու այն ազնիւ զգաց-
մանց համար, զորս ժողովականք այնքան վե-
հանձնաբար կը յայտնեն ինծի: Եթէ ատենա-
պետի պաշտենէն հրաժեշտ տալէս ետքը մէ

քանի անգամ ժողովոյն ներկայ չը դանվեցաց
պատճառն այն է՝ որ կը վախնայի իմ արժանի-
քէս վեր այդպիսի զգացմանց արտայայտութեամ-
մը հանդիպելու . Հետեւաբար մեծ էր վարան-
մունքս. մէկ կողմէ այնպիսի պատճառներ ու-
նէի , որք ինծի արգելք կ'ըլլային այս պաշ-
տօնը շարունակելու , եւ միւս կողմէ՝ Ժողովոյն
երկու անգամ հրաժարականս չ'ընդունիլն ի-
մանալով կը խելամտէի թէ պիտի պնդէ իւր-
որոշման վրայ , եւ սնոր այս որոշ կամացը դէ-
յա ճառիլ կենալ՝ աններելի անքաղաքավարու-
թիւն մը կ'ըլլար իմ կողմէս : Ուստի ամեն
անգամ որ ժողով կը գումարվէր , կուղել-
ներկայ դանվիլ , բայց ահա շուարեալ եւ շր-
փոթեալ չ'էի կրնար դիտաւորութիւնս գործա-
զրել : Այս վարանումա ժողովոյ ծանօթ ըլլա-
լով կը յուսամ որ կը խնայէ ինծի , կը յուսա-
որ առանց բացատրութիւն ուղելու հրաժարա-
կանս կ'ընդունի եւ զիս այս ծանր կացութենէ-
կ'աղատէ :

Իմ հրաժարականիս պատճառը անձնականիութեան չէ, այս պատահական պատճառը

ոը չէ , եւ այս իմաստ խօսք մը բնաւ չ'եմ
դրած իմ ոչ մէկ նամակիս մէջ ։ Բայց բուն
պատճառին բացատրութեանը մտնել՝ նոյն իսկ
ծողովին դործոց արգելք մըն է եւ ժամանա-
կի ընդունայն կորուստ . եթէ օգտակար թշւէր
ինծի այս բացատրութիւնը , մտագիւր կը փու-
թայի զայն ի վեր հանել , եւ սակայն դիտեմ
թէ արդիւնք մը պիտի չ'ունենայ . ուստի կ'ա-
ղաջեմ որ ժողովը հաճի հրաժարականս ըն-
դունիլ . կ'աղաջեմ մանաւանդ նախագահ
Արքազանը որ իւր այն խօսքը՝ թէ ժողովը ար-
համարհած ըլլամ , ետ առնէ . Ես , Ընդհանուր
ժողովը արհամարհեմ . որո՞ւմտքէն կ'անցնի այդ .
բոլոր Ազգը՝ Ընդհանուր ժողովը փորձով զիտէ
թէ հրքան կը պատուեմ եւ կը խոնարհիմ իր ո-
րոշմանցն առջեւ : Այդ բառը իմ ազգասիրա-
կան զգացումն կը վիրաւորէ եւ կը տիրե-
ցընէ :

ՍԸՆԱՃԵԱՆ Յ. ԷՅ. — Նախորդ նիստին մէջ
որուն ներկայ չ'էի , սիրելի անուն մը՝ Պալ-
եանի անմահ անունը յիշվեր եւ անոր յիշա-
տակին համար մեծարանաց քըւէ առաջարկվեր
է . ոչ միայն յարգանք անոր յիշատակին , այլ
եւ անոր հոգւոյն համար պաշտօն մատուցա-

Նելու պարտաւոր է Աղջը . բայց Պալեանի
խուցին մէջ աշխատօղ՝ անոր վաստակակից
ուրիշներ ալ կային , զոր Ռուսինեան է Փ.
մոռցած է յիշել : Յտեանն է մէկը՝ որ մի եւ
նոյն աղդամիրական ողւով Աահմանազրութեան
գաղափարը երկնած եւ աշխատած է զանի ի
գոյ ածելու համար . այսպէս Աղջին օգուտը
խորհօղ աղդամէր անձեր կորուսինք , բայց մէ-
կը մէջէրնիս է

ՕՏԵԱՆ Գ. ԷՅ. — (Ընդմիջելով) Կ'աղաչեմ
որ խնայէք ինձի եւ մանաւանդ չը շռայէք
այնպիսի գովեստներ որոց բնաւ իրաւունք
չ'ունիմ :

ՍԸՎԱՃԵԱՆ Յ. Էֆ. — (Խօսից թելք ձեռք
առնելով) Դժբաղդաբար Ազգը կորոյս այն քա-
նի մը անձինքը՝ բայց մէկը ներկայ է , որ
տասնեւհինգ տարի առաջ սկսաւ Ազգին օգ-
տին ծառայել եւ դեռ կը շարունակէ . ինչ
կայ ուրեմն որ տասնապետութեան աթոռը կը

Ճգէ , ի՞նչու այս հրաժարականը . ես չ չեմ ընդունուիր դայն :

ՕՏԵԱՆ Գ. ԷՅ. — Եֆէնտիներ, կը տեսնէք
որ յանցանքը իմս չ'է՝ եթէ իմ պատճառաւ ձեր
թանկագին ժամերն ընդունայն կըսպասին.
Դարձեալ կ'ըսեմ թէ յանցանքը իմս չ'է :

Նմ վրաս կտրդացված այս ներբողները որպան պատռարեր ալ ըլլան, անիրաւ են եւ անտեղի . թող ներէ ատենաբանը որ այսպէս անուանեմ իւր գովնասոր :

Անցեալ շարթու Ատենադպիր էֆ. ամենուս
սիրելի եւ ինձ համար մասնաւորապէս կոկծա-
լի անուն մը յիշեր է , Պալեան Նիկողոս աղա-
բին անունը ։ Այդ անձը՝ զորոյ կորուստը գեռ
չառ ժամանակ պիտի ողբանք , առաջին առ-
դամ յղացած է Սահմանադրութեան դադախա-
րը , ինչպէս Ատենադպիր էֆ. առաջին անգամ
ժողովին մէջ յայտներ է , ինչպէս ատենով ես
ալ Մեղուի մէջ հրատարակած եմ : Այլ սխալ
է թէ ես ալ այն միջոցին համավաստակ զըտ-
նըված եմ իրեն : Այն ժամանակ զրեթէ չ'էի
ճանչեր Նիկողոս աղան : Անկէ քիչ մը ետքը
ծանօթացայ , ու միանգամայն ծանօթացայ նաեւ
Սահմանադրութեան ծրագրին որուն խորհրդա-

կից ու վաստակակից դժնված է միայն
Ռուսինեան էֆ :Այսքան այս կէտին վրայ խօ-
սելէ ետքը՝ իմ հրաժարականիո խնդրոյն կ'անց-
նիմ եւ կ'աղաչեմ որ Ժողովը առանց պատ-
ճառը հարցապնդելու եւ կարեւորութիւն տա-
լու աւելի քան զոր կ'արժէ , բնդունի զայն :

ԱՅՎԱՏԵՍԱՆ ՄԱՏ. Էֆ. — Ո՞վ յղացեր է Սահմանադրութիւնը, նախընթաց նիստին մէջ առոր վրայ երկտր խօսվելէ ետքը՝ այսօր կրկին վիճաբանութիւն մը կը բացվի եւ այս արտաքոյ կարգի խնդիրը նորէն կը յուղվի: Թէեւ դեռ ատենական ներքին կանոնադրութիւնն մը չ'ունինք, բայց երեսփոխանները հրաւիրված են որոշեալ խնդրոց վրայ խօսելու, եւ չը կընառ ներքին որ Դիւանը բազառին և ննուինեռ

յարուցանելու թոյլառուութիւնը ընէ : Խակ Օտա-
նան է Փ.ի հրաժարականին դալով կ'ըսեմ որ
եթէ պատճառ ցոյց տրված չ'ըլլար, Ժողովը
զայն կ'ընդունէր . բայց քանի որ պատճառ կը
ցուցնէ եւ միայն զայն բացատրել օգտակար
չը դատեր, Ժողովը կուզէ որ Օտեան է Փ. կամ
անցնի իր ատենապետի աթոռը եւ կամ հաճի
բացատրութիւն տալու, որպէս զի եթէ ընդու-
նելի է իր պատճառը, Ժողովը չը պնդէ իր
խնդրոյն վրայ :

ՍԸՎԱՃԵԱՆ Յ. ԷՖ. — Էթէ սիսալ կարծիք
մ'ունեցեր եմ, ետ կ'առնում զայն . բայց լնչ
որ Օտեան էֆ.ի մատուցած ծառայութեանցը
համար ըսի , սիսալ չ'է երբէք . ազգային Սահ-
մանադրութեան ծրագիրը խմբաղրօղ Յանձնաւ-
ժողովին անդամներէն մէկն էր եւ ինք

Ատենապետ է Փաթագարարէ Սըմբանեան է Փ. ի
թէ խնդրէն կը չեղի, եւ կը հրաւիրէ զինքը
առ այն դառնայրու.

ՍԸՎԱՃԵԱՆ Ե. Էֆ. — (Խոսից թելլը ձեռք
առնելով), եւ տասը տարիէ իւ մեր աշխատած
է այս գաղափարին համար. Եթէ զայն ուրիշն
յղացեր է, չը դիտեմ ։ Խսկ հրաժարականի
խնդրոյն դալով Այլառեան է Փ. Ի համամիա-
եմ եւ կը փափաքիմ որ Յանեան է Փ. շարունա-
կէ ատենապետի պաշտօնը եւ կամ բացատրէ
իւր պատճառը ։

ՏԱՐԵՐՈՒՄԻՈՍ ՎՀԴ. — Սըլվաճեան էֆ.ի ա-
ռաջարկութիւնն երկրորդ ելույ ես աղ կ'ըստ
որ ժողովը խնդրէ Օտեան էֆ.էն որ իւր հրա-
ժարժան պատճառը յայտնէ :

Ճողովականք այս ու այն կողմէ միեւնոյն փափաքը կը յայտնեն, հետեւապէս օտեան է Փախար. Կ'առնու Դիւանէն :

ՕՏԵԱՆ Գ. Էֆ. — Ա'աղաջեմ որ Ժողովը քանի մը վայրկեան թայլքուութիւն ընէ ինծիհը բաժեշտիս պատճառը բացատրելու, որ անկախ է Բայե Խնձիկ ու անկախ է Առաքել

Ար եւ է պաշտօններկու կողման հաճութիւնը
կ'ուզէ խմանալ ։ Առաջ առաջ առաջ առաջ առաջ
Որ եւ է պաշտօններկու կողման հաճութիւնը
կ'ենթագրէ, տուօղին եւ ընդունօղին . իսկ ազ-
գային պաշտօնները բոլորը այսպէս չ'են
այն որ ազգային պաշտօնի կոչված է, կրնա-
տհաճիլ զայն վարելու սակայն որովհետեւ զո-
հողութիւն պարտաւոր է, պէտք է յանձն առ-
նու . ազգային պաշտօններուն կութեան պայ-
մանը քստ իս սա է որ՝ պաշտօնը տուօղը պէտք
է վատահ ըլլայ պաշտօնը առնօղին վրայ, եւ
առնօղը գիտակցութիւն ունենայ թէ պիտի կըր-
նմայ վարել այն պաշտօնը յօգուտ անոր որ յանձ-
նեց իրեն : Ազգը իմ մատաղ տարիքէս իւր ա-
կրնկալութեամբը, եւքն ալ իր վատահութեամ-
բը պատւած է զիս, տան եւ ութն ամաց հե-
տէ առ եւ առ մասմեռու եռած է, առ

պաշտօններուն մէջ շատերը չ'եմ մերժած, զո
մանս չ'եմ ընդունած: Այդպրէն՝ ինչպէս յիշվե
ցաւ, Սահմանադրութեան Մասնաժողովոյ մե
ռամ եղած էի, այն ատեն հիմակրան ժամա
նակէս չատ տարբեր էր, ամենքն ալ չ'էին ու
զօղ եւ սիրոդ Սահմանադրութեան: Հին ըրու
նապետութեան մևացորդները դեռ զօրաւոր էին
ապեն աղդեցութիւն ու հնարք ունէին դործե
լու համար եւ ամեն եղանակաւ կը դործէին

կորիւի ժամանակ էր եւ կորիւով ու զոհողութեանիրք կընար հաստատվիլ Ասհմանադրութիւնը :

Այսպիսի պարագոյին մէջ երբէք չը վարժնեցայ դորձունեաց պաշտօն վարելաւ, եւ յանձնամողովներուն մէջ ինչպէս նաև ազգային պայքարին մէջ յառաջադէմներէն մէկը դանդիսցայ . Երբ կոփւը մարեցաւ, Սահմանադրութիւնը հաստատեցաւ, վտանգը անցաւ, ինէ աւելի փորձառուներուն թողելով միշտ հրաժարեցայ աղջային վարչութեան մէջ զըտնըմիլու պատիւէն : Միայն ասկէ երկու տա

ըի տռաջ, մեծ փոթորկի և անշշխանութեան
ժամանակ մը, ուր օրինաւորութեան հետքն
անգամ չէր մնացած Աղջին մէջ, Աղջին հա-
մար օգտակար դատեցի որ օրինաւորութիւնը

զովին մէջ մտայ : Թէ այս զանազան պարտա-
ւորութիւններն ու պաշտօնները ինչպէս կա-
արեցի , Ազգը թող դատէ . ևս երբ խղճը-
անքիս կը հարցնեմ , զուարթութիւն մը կ'ըզ-
դամ հռն եւ այդ զուարթութիւնը հերիք է
ինձ :

Նրբ օրինաւորութիւնը վերահաստատեցաւ ու
Ըսդհանուր ժողովը զումարեցաւ, դարձեալ
հարկ համարեցայ ընդունիլ ատենապետութեան
պաշտօնը, նախ նոյն խիլ այն երկիւղիս հա-
մար որ Ըսդհանուր Ժողովոյ ըրած պատիւը ար-
համարհած ըլլալու կասկած չը տամ, երկիւղի-
զոր Երեմիա Սրբազնը իր խօսքերովը արդա-
րացուց քիչ մ'առաջ, եւ երկրորդ՝ այնպէս
կարծելով թէ ատենապետութեան պաշտօնին
սահմանը մինչեւ այն օրը լաւ հասկցված չէր
եւ կարծեցի թէ խօսքով ու զործքով կրնամ
այս մասին ծառայութիւն մ'ընել ։ Ժողովն ար-
իմ այս կարծիքս հաստատեց եւ ապացոյց այս
որ արաօր կ'ըստիսկէ զիս շարունակելու ատե-
նապետութեան պաշտօնը ։ Քայլ իմ կարծիքս
հիմայ այն է որ ասկէ ետքը ուրիշ մը աւելի
օգտակար կրնայ ըլլալ այդ պաշտօնին մէջքան
թէ ևս ։ Խնչո՞ւ ։ Աւասիկ պատճառը ։

Տաս տարի կայ որ Սահմանադրութիւնը զոր
ծողրվիլ սկսած է , եւ Ազգը ժողովներ ունի
սկիզբէն ի վեր հասարակութեամն մէջ կարծիք կար
թէ Գիւանն ըստ քմաց կը վարէ ըղձողովը , ե
խնդիրները ուր որ ուղէ հօն կը յանդեցնէ ։ Ը
սօղներ իսկ կային թէ քըւէտուփին մէջ սատա
նայ կայ , եւ Գիւանի անդամք՝ անհաւատք
անհաւատութեամն չնչոլ սատամամն իրենց նր
պատակին գործիքն ու կտմակատար պաշտօն

եայն ըրած են . հիմայ քըւէտուփին մէջ սա-
տանային էութեան հաւատացօղ չը կայ , բայց
կը կասկածին թէ Դիւանը վարպետութիւններ
ի գործ կը դնէ : Իրաւցնէ ալ այս կասկածը
կրնայ ըլլալ . կարելի է Ատենապետին վարպե-
տութիւն բանեցնել , որքան ալ հեռափեսող ա-
տենական կանոններ ունենայ ժողովը . ուշիմ
եւ սրատես ժողովականներ որքան ալ հսկեն
արթնութեամբ , ճարտար Ատենապետ մը կրնայ
միջոց մը դտնել , եւ վարպետութիւն բանե-

ցնելով լուծման վրայ եղած խնդիր մը երկարաձգել, անոր վրայ ազդեցութիւն բանեցնել զի կէս ժամ առաջ կտմ ետքը խնդիր մը քըւէի գնելուն մէջ իսկ տարրերութիւն կայ. Եւրոպիս մեծամեծ ժողովներու մէջ անգամ տանհնապետք այս տեսակ վարդետութիւններ բանեցնելու կարօղ կ'ըլլամու. Հետեւաբար Ատենապետին վրայ առաջին բնտովելիք յատկութիւնը տէտք է ըլլայ անկողմնասիրութիւն եւ արդարասիրութիւն: Ոչ ոք իմ անկողմնասիրութեանը վրայ կը տարակուսի, գէթ անանկ կը կարծեմ որ մէկու մը իրաւունք տուած չ'եմ կամ կածելու. եւ իրօք այնպէս ալ է, եթէ իմ պաշտօնական կացութիւնս չ'ըլլայ: Խնդիրները

թէ' մօտէն թէ հեռուէն կրնան քաղաքական
երեւոյթ մ'ըստանալ, եւ ինձի պէս մարդոց
Դիւանին զլուխը գանվիլը առիթ մը կ'ըլլայ
դուրսը Ժողովոյ որոշման պատկառանքը՝ որ էական
պայման մըն է, նուազեցնելու: Պատիւը եւ
նլարտքը ճանչող մարդը երբէք յանձնառու չ'ըլ-
լար դործիք ըլլալ, բայց միշտ շատ է այն մարդոց
թիւը որ կրնան հաւատալ սրտի ապականութեան։
Այսպէս ահա՛ երբ ես իմ խղճմտանքովս միայն
կը վարվիմ եւ անկողմնասիրութիւնը թերեւս
իմ միակ առաջինութիւնս է, երբ ոչ թէ մի-
այն իրրեւ Աւենապետ իմ կարծիքիս կողմը
չ'եմ աշխատիր, այլ երեսփոխանի իրաւունքս
ալ կը զոհեմ շատ անդամ այն կարծիքս պաշտ-
պանելու, որով ձայն մը պակաս կ'ըլլայ իմ
կարծեացս կողմը, միւս կողմէ որքան ալ ան-
կողմնասէր ըլլամ, միշտ թէ դուրսը եւ թէ
Ժողովոյ մէջ ըստ երեւութիւն իրաւունք կ'ու-
նենան կասկածելու թէ ազդեցութիւն գործ
կ'ածեմ, ասով տեսակ մը անվատահութիւն ալ
կըսկսի, որ օգուտ եւ ոլատիւ չը բերեր Ժողո-

վին : Արդ կուգամ աղաչել ձեզի որ աղատէք
դիս այս անվաստահութեան ճիւաղէն , աղատէք
եւ զձեզ . եւ տաք ինծի իմ երեսփոխանի իրա-
ւունքս ատենաբանից կարգը իմ կարծիքներս
ու իմ համոզմունքներս պաշտպանելու . եւ ա-

ակնագետութեան աթոռը բազմեցնէք այսպիսի
մարդ մը՝ որուն վրայ պաշտօնական պատճառ
չըլլայ ոչ հոս ոչ դուրս կասկածելու . աստվ
իմ իրաւունքս յարդած կ'ըլլաք , Ֆողովոյ ո-
րոշմանց արժանապատութիւնը անվթար կը
մնայ , հասարակութիւնն ալ տարապարտ կտա-
կածներով չը տանջիր , տոսր անոր քմացը հա-
մեմատ : Արդ այս երեք նկատմամբ ալ օգտա-
կար է իմ առենապետութենէ հրաժարիլս , ին-
չու կ'ուզէք որ մնամ :

ՔՈԼՈՒՄՆ Ա. ԷՅ. — Կը տեսնեմ որ Օտեանէ
է Փ. իւր մէջ բերած փաստերովը խօսու աղէկ
ևցոյց որ Ատենապետ մը կրնայ վարպետու-
թիւններ բանեցնել . Օտեան է Փ.ի անկրողմնա-
սիրութեան վրայ ոչ ոք կը տարակուսի, եւ ա-
հա ճիշդ այս պատճառին համար է որ Փողովը
կ'ուղէ զինքը ատենապետի պաշտօնին մէջ
տեսնել եւ սխալած չ'է իւր ընտրութեամբը :
Չեմ իարծեր որ Օտեան է Փ. իրը երեսիոխան
խօսել ուղած ատեն մէկ քանի անդամ իւր տե-
ղէն ելնելու համար ծուլութիւն ընէ . թէ որ
այս է իւր մէջ բերած պատճառը՝ կրնայ ջնջիլ,
բայց եթէ բացարձակապէս չ'ուղեր ատենապե-
տի պաշտօն վարելը , չ'ենք ստիպեր զինքը :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՅ. — Երբ պահ մ'առաջ ըստ
թէ՝ ատենապետի կրկին ընտրութիւնն մ'եղած
ատեն բոլոր Ֆողովիր միակամ Օտեան էֆ. ի նո-
րէն քըւէ պիտի տայ, դիտէի թէ ինչ նկա-
տումներով պաշտօնէ կը քաշվի ինք, եւ իրա-
ւունք ունէի այսպէս ըսելու։ Այն վարպետու-
թիւնները՝ որոց վրայ Օտեան էֆ. պահ մ'ա-
ռաջ խօսեցաւ, չը զործածեց ինք երբէք իր
պաշտօնավարութեան ատեն, մինչեւ իսկ երբ
այնպիսի խնդիր մը ծագեցաւ՝ որ Ազգը երկու
մասի պառակտել կ'սղառնար, զոհեց այն խընդ-
րոյն մէջ իւր մասնաւոր կարծիքը եւ ջանաց
հակադէմ կարծիքները համաձայնեցնել։ Տաս
տարիէ ՚ի վեր Ազգը Երեսփոխանական Ֆողով
ունի, ատենով հաւատացօղներ ալ եղած են
որ Դիւանը իրեն սպասարկու սատանայ մը ու-
նի քըւէտուփին մէջ, ինչպէս Օտեան էֆ. ը-
սաւ. անցեալ տարիներու Ժողովներուն մէջ
թերեւս այդ սատանան երբեմն կ'երեւէր, բայց
դիտենք որ Օտեան էֆ.ի ատենապետութեան
միջոցին բոլորովին խոյս տուաւ քըւէտուփէն
կ'աղաւէնքնը ուրեմն որ իւր աթոռն անցնի։

Ա.ՊՐՈ. Ա. Էֆ.—Ժողովը պարտք չ'ունի Օտեան
էֆի աղաչելու որ իւր պաշտօնը շարունակէ ,
այլ կը մնթէ հրաժարականը , եւ եթէ նա ազ-
դասէր է , ինչպէս կը հաւատանք թէ է իրօք ,

կը պարտաւորի մասոցանել Ազգին այս ծառ
ույութիւնն որ կը խնդրի իրմէ :

ԱՅՎԱՏԵԱՆ ՄԱՏ. ԷՅ. — Կատարեալ անկեղծ
ծութիւն կը տեսնեմ Օտեան էֆ. ի յայտարարու-
թեանց մէջ . թերեւո պաշտօնէ քաշվե-
լու համար իւր ըրած դիտօղութիւններն իրա-
ւացի համարվին , սակայն այսօր Ժողովը թերի
վիճակի մէջ է , եւ դժար կ'ըլլայ ուրիշ ձեւ
որնհաս մէկը գտնել . ուստի կ'առաջարկեմ որ
Օտեան էֆ. այս պաշտօնը յանձն առնու , գէթ
մինչեւ որ Ժողովոյ թիւը ամբողջ 440 անդա-
մաց լրանայ :

ՕՏԵԱՆ Գ. Եֆ. — Ամենայն անկեղծութեամբ
իմ պատճառներս յայտնեցի, ինչպէս ըստ Այ-
վատեան էքի Ժողովոյ հրամանին չ'եմ կրնար
դիմադրել, բայց երբ կը սինդէ որ անպատճառ
ատենապետութեան պաշտօնը վարեմ, զիս հը-
րաժարեցուցած կըլլայ երեափոխանութենէ,
զոր ես ամեն պաշտօնէ նախամեծար կը հա-
մարիմ :

ԱՊՐՈ Ս. ԷՅ. — Եթէ ամեն ոք այսպէս պատճառներ յառաջ բերելով չ'ուզէ Ազգին կողմէն իրեն յանձնված պաշտօն մ'ընդունիլ, անկարելի կ'ըլլայ Ազգին դործերը կարգադրել. կը գենեմեմ որ ծողովը չարունակ կը մերժէ Օտեան էֆ-ի հրաժարականը, ուստի պարտաւորէ նա իր պաշտօնը՝ զոր իսկ սկզբան սիրով յանձն առաւ, ըստ առաջնոյն չարունակել, մինչեւ որ ծողովը հաւանի նոր ընտրութիւն մ'ընելու:

Ամենուստ հաւանութեան ձայներ կը լովին
Ժողովոյն մէջ, հետեւապէս Օտեան էֆ. Ժողո-
վին կամաց առջեւ կը խոնարհիմ կ'ըսէ : Նոյն
միջոցին օրը տարածամեալ ըլլալով, Փոխատե-
նապետ էֆ. մեկնելու ստիպեալ եմ կ'ըսէ եւ կը
թողու զաթոռը Օտեան էֆ.ին : Դիւանը շնորհա-
կալութիւն յայտնելով քըւէ կ'առաջարկէ Ժո-
ղովին, սակայն Օտեան էֆ. չընդունիր եւ կը
շարունակէ ատեանը, խնդրոց կարգին դառ-
նայուի :

2° ՎԵՐԱԲԵՆՆՈՒԹԻՒՆ ՍԱՀՄԱՆ .— ԳԼՈՒԽ
ԹԱՂԱԿԱՆ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒԹԵԱՆ

Ատենապետ էֆ. յայտնելով թէ Սահմանադրութեան ծրագրին սոյն մասին վրայ զրաւոր դիտօղութիւններ ներկայացված են ժողովականաց ուսանց կողմէն եւ արդէն Դիւանին յանձնըված . խօսք տուաւ Ռուսինեան էֆ.ին իրրեւ տեղեկաբեր Վերաքննիչ Յանձնախմբին՝ պատասխանելու համար սոյն դիտօղութեանց :

ՌԱԴԻՍԻՆԵԱՆ Էֆ. — Նախ կ'ուզեմ Տ. Ե-
րեւանիա Արբագանին դիտողութեան պատասխա-
նել, եւ ահա կը կարդամ դայն :

« Թաղեր ներկայանան իւրաքանչիւր իւր եւ
կեղեցւոյ թեմական ժողովրդէն ընտրեալ
Թաղական ժողովրդմը , զլուխուննենալով նոյն
եկեղեցւոյ մէջ գտնված քարողիչ կամ առ
և ապերէց կամ կղերական դասէն արժա-
նաւորագոյն թէ քարողիչ լինի թէ առապերէց ,
եւ թէ ուրիշ արժանաւոր կղեր մի . Պօլսոյ
մէջ Պատրիարքն հաւատատէ իրրեւ իր կողմանէ
փոխանորդ , իսկ գաւառաց մէջ առաջնորդը .
կարգեալ կղեր միշտ նոխագահ է ժողովին եւ
միշտ հաւատարմութեամբ տի հոկէ թաղային
ամեն կերպ մատակարարութեանց վրայ , եւ
Թաղային ժողովոյ հետ միշտ պատասխանատու
է : — Իւրաքանչիւր թաղ սոյն ժողովին միջ-
նորդութեամբ հոկէ իւր առանձին մատակա-
րարութեան վրայ : »

ԱԵԿԵՊԵցւոյ արժանաւոր կղեր մի միշտ հսկօդ
եւ ներկայ նախագահութեամբ , եւ իւր կեդ-
րանին ընդհանուր խորհրդոց վերատեսչութեան
տակ . սոյնպէս արժանաւոր կղեր մի միշտ
պիտոր նախագահէ Թաղական Խորհուրդի մէջ,
եւ միշտ ներկայ լինելով խորհուրդին՝ հսկէ
խորհուրդին ամեն կերպ մատակարարութեան
վրայ , ելից եւ մտից վրայ . Թաղային եւ ըն-
տառնեկան վէճերու համար իրբեւ Պատրիարքի
վոխանորդ խորհուրդին համաձայնութեամբ
հակառակորդներ եւ լիճօղներ կրնայ իրաւա-
խոհ տռնել , եթէ խնդիրը ծանրանայ տեղե-
կացրով Պատրիարքարան դրկել :

« Ծ-ն-օ-թ-ո-թ-ե-ն .
« Գաւառուաց մէջ շաս դեղեր կան որք 250
ընտրող չ'ունին , և մերձակայ դիւղիչ ունե-
նալով չ'են կարօղ միանալ նոցա հետ : Ուստի
գաւառուաց մասին ծանօթութեան մէջ զրելու
է թէ՝ այն դեղեր՝ որ 250 ընտրօղ չ'ունին
և մերձակայ գիւղի մը հետ կարելի չ'է միա-

նալ, իրենք իրենց ունեցած ժողովրդով պատասխան առանձին թաղ կազմել, հերիք է որ ունենան և կեղեցի, քահանայ եւ հարիւրէն մինչեւ քառասուն եւ քառասունէն մինչեւ քամն հոգի մասունք ։

«Փաւառաց համար եթէ՝ այս կերպ ծանօթութիւնը տրվի, շատ գեղեցիկ որ քսան, կատասն տունէ բաղկացեալ են, ոչ թաղային ժողով, եւ ոչ թաղական Խորհուրդ կ'ունենան մանաւանդ այն դժբաղդ զիւղացիք, որք տա

սըն կամ քսան եւ կամ աւելի ընտանեօք թրր-
քաց եւ քրդաց մէջ խառն քնակած են որք
աւելի մեծ կարեւորութիւն ունին թաղացին
ժողով եւ թաղական Խորհուրդ ունենալ : Գը-
րած ծանօթութիւնս փորձով տեսած եւ գոր-
ծով դորձագրած եմ Աշայ եւ այլ գեղերու
մէջ ։

Գերաշնորհ Արքազանին այս գրաւոր դիտողութիւնը՝ կարծեմ՝ գլխաւորապէս այդ յօդուածին ծանօթութեանը վրայ կը կայանայ, եւ բնագրին մէջ համաձայն ևնք, որովհետեւ Թաղական ժողովոց եւ Խորհրդոց նախագահութեանը ևկեղեցւոյ մեծաւորին արվիլը կ'ընդունի: Դիտել պէտք է առաջոր ծանօթութիւնը հարկադրական տրամադրութիւն մը չ'ենթագրեր, այլ իբր հրահանգ կամ բնագրին ընդարձակութիւն դրված է հան, 230թիւը՝ անհրաժեշտ պահանջելի թիւը չ'է, այլ ընդհանրապէս բաւական նկատված է. իսկ այն թագերն որ չ'են ուղել միանալ, որ եւ իցէ պահառով թէ եւ շատ քիչ ըլլայ ժողովարդնին, ազատ եւ կարօղ են չը միանալու ուրիշ թաղի հետ, եւ ինքնին առանձին մատակարարութիւն կազմելու. այս է ծանօթութեան իմաստը եւ ոչ այլ ինչ, որ եւ կրնայ ալ ուլորովին վերցվի անկէ առանց բնագրին վընասելու:

Տ. ԵՐԵՄԻՆ. ԵՊՈ. — Կախ պարտք կը համա-
ռիմ յայտնել որ Ասհմանագրութեան մէջ դըրա-
ված ծանօթութիւն մը գաւառոց մէջ իբր կա-
տան կը բռնեն. Երկրորդ՝ ցաւօք կը տեսնեմ որ
կեղեցականները զատ մարտին մը նկատելով
նեն ուղեր որ ժողովրդեան հետ միաբան գոր-
է, եւ ասով խտիր մը կ'ուղեն դնել. Կար-
եմ խնդիրը կը վերնայ մէջ տեղեն երբ թա-
ւերու ժողովուրդն ուղղակի ինք ընտրէ իր ե-
ղեցական նախագահը, որ Պատրիարքի կող-
է փոխանորդաբար հակէ թաղային բոլոր գոր-
ոց վրայ. Մեծաւոր բառն ալ մերցնելու է, ի կաթոլիկներէն մտած է, եւ մեր նախնիք
ուղախի բառ չեն ի ներ առած.

Տ. ԵՐԵՄԻԱ. ԵՊՈ. — Բացարեմ թէ ինչ կը
հասկնամ հսկողութիւն ըսելով : Թաղական խոր-
հուրդները կը բամբառվին, իբր անհաւատարիմ
դրամական գործոց մէջ, պէտք է որ անոնց
մէջ զէթ իբր հսկող եկեղեցական դասէն մէկ
նախագահ գտնվի, որ ամբաստանութիւն մը
երեւան եկած ատեն՝ անոր ստորդ ըլլալը կամ
չըլլալը նախագահին հարցվի եւ հաւատարմա-
բար իմացվի անկէ :

Տ. ԱՄԲՐՈՍԻՈՆ ՎՐԴ. — Թաղական մատու-

կարարութեանը գլխիմն վրայ պատաջին ամսովաճ
խօսված առեւնոթէ եւ ես ալ իմ դեռժզութիւն-
ներս ըրբի , բայց ըստ որում գրաւոր չէին՝ անձ
պատասխան մնացին , ըստ իս հոս Քայլութիւնը
թէ փւրաքանչիւր թաղի քարոզիչ թաղին ժո-
գովրդեան կողմէ ընտրեալ ալիսի ըլլայ թէ
Սրբազնն Պատրիարքին կողմէն . քրոտ որում
Պոլսի ընդհանուր առաջնորդը Սրբազնն Պատ-
րիարքուէտ խնդիրը զաւծելու համար այէտք է
նախ այս Ալէալը ալսրզելու Հարկէ էսոնուեալոր
պատուակալ եւ մնձաւոր բառերը լերնան , եւ
քարոզիչը քանի որ Պատրիարքի փախանորդն է և
արածնութիւն ունենաց ամեն խորհրդոց նախա-
գահելու .

ՊԱԿԱՆ Յ. Եֆ. առ Պախս տեղեկաբեր էֆ. գո-
հայուցիչ ալատասխան ըլլ տուաւ թէ ինչ մի-
ջոց ի գործ ալիտի դրվի 250 ընտրօզ չ'ունեցօզ
թաղերում նկատմամբ Երելորդ Սահմանադրու-
թեան ծրագրին մէջ զործածված մնձաւոր բա-
ռըն ալ անպատշաճ կը թըւի , նոյնպէս կէը բա-
ռն ալ , զոր Երեմիա Սրբազնն ըսած է , իւր
առաջարկութեան մէջ : Բայց Երբ Երեմիա
Սրբազնն ժողովուրդն ու եկեղեցականները
տարբեր մարմններ կը կարծէ եւ այն մտօք աւ
ուաջարկութիւններ կ'ընէն կը բողոքեմ իրեն դէմ
մնջ խոտիր չ'ունինք Երբէք , եւ պէտք է միշտ
մէկ մարմին ըլլանքի փառաւազդի եւ եկեղեցւոյ :

ՊԱԶՄՐՈՍԵԱՆ Ք. Եֆ. առ Սահմանադրութեան
ծրագրին մէջ խել մը նորահնար բառեր կ'երե-
ւին , որոնք ոչ միայն վիճաբանութեան նիւթ
կը մատակարարեն , այլ եւ թիւրիմացութեանց
աեղին կուտան : Սահմանադրութիւնը քանի
որ օրինագիրք մըն է , պէտք է որ ամենուն
հասկնալի կերպով խմբադրվի :

Կ'առաջարկեն որ Թաղական Ժողովին՝
տեղւոյն քարոզիչը կամ մեծաւորը նա-
խազանէ , Պատրիարքէն կամ Ժողովին ընտ-
րեալ Անտեղի եւ անհետատես առաջարկու-
թիւն մըն է այս . Ժողովը կամ Խորհուրդը ինք
կրնաց որոշել իր նախագահը , եւ մանաւանդ
ինչու այս պաշտօնը ուրիշ պաշտօնէութեան
մը հետ դրամէս կապված ըլլայ : Կրնայ ըլլալ
որ քարոզիչ մը աղէկ քարոզ խօսիլ զիանայ ,
այց չը կրնայ ժողովոց նախազահութեան
պաշտօն մարել : Աւրջապէս աւելորդ է թա-
ղական ժողովոց թիւը նախասահմանել , մասն
զի Գործադիր Յանձնաժողովոյ կը պատկանի
անապէս ըստ տեղւոյն կարգադրել զայս պարա-
գան , եւ անտեղի է այս տեսակ մասնաւորութիւն-
ներով Սահմանադրութիւնը ծանրաբեռնել :

ՓՈՓԱԶԵՍՆ Ս. Եֆ. — Եօթներորդ նիստին
մէջ Առևտանիւտ է ֆ. աղդարութիւնը ըրաւ-
որ Ստհմանագրութիւնն ծրագրին վրայ դիմա-
դութիւնը ունեցազները գրաւոր Ներկայանեն .
նոյն իսկ Վերաբնիչ Յանձնախմբին տեղերկա-
րեր Խուսինեան է ֆ. ալ հաւանեցաւ առ այս .
եւ անսեա ալ ծրագրին ի քնին առնելով հար-
կադրեցայ թաղական մատակարարութիւնն գը-
լութիւնը խթագրելու գոր այսօր ժագովին պիտի
ներկայացնեմ է եթէ Դիւանը յիշէ իւր ազգա-
րարութիւնը եւ արտօնութիւնն տայ Այս նոր
խմբագրութիւնն մասին կ'ուզեմ առ ծանօթու-
թիւնը եւ ատար ժագովին թէ Դիւանին նոյն
ազգարարութիւնն վրայ քանի մը Երևափոխան-
մացանք թաղական մատակարարութիւնն գը-
լուխը աչքէ անցնելու , բայց անկարելի եզաւ մէ-
շէն դուրս ելնելութէ եւ անփառնի մը անուրանու-
թիւրաբեմանութիւններ ալ ունէր ուստի պար-
տաւորեցանք ամբողջ Ասհմանագրութիւնը մը
խմբագրել խորհրդակցութեամբ , այսպիսի գը-
լութիւնամբ մը որ մինչեւ առա տարի մերա-
քննութիւնն պէտք չ'ունենայ Ընդհանուր օ-
րէնքները միայն գրնչք անոր մէջ եւ այն բա-
ները զորս ժամանակը շարունակ փոխելու
պէտքը կը բերէ , եւ որոնք գործադիր իշխա-
նութիւնն վերաբերեալ բաներ են , կարեւոր չը
դատեցինք միւնքներուն հետ խառնել եւ շրմո-
թել Արտօնութիւն առեւք ինձ ուրեմն Թաղ-
մատակարարութիւնն ուլուխը կարդալու :

ԱՏԵՎԱՊԵՏ Եֆ. — Այդ արտօնութիւնը ՀՀ
առւած դիտօղութիւն մ'ունիմ , որում եթէ ու-
շաղրութիւն չ'ըլլայ , այս տեսակ առաջարկու-
թիւններ շարունակ երեւան պիտի ելնեն , եւ
բացված խոդիրը կնճռութեն :

Երբ ժողովին ծրագիր մը կը ներկայանայ , անոր
վրայ երկու կերպ վիճարանութիւն կ'ըլլայ մէկ մը
ընդհանուր կերպով ծրագրին ոգեղյն , սկզբանց .
եւ ընթացից վրայ , մէկ մ'ալ մասնաւոր կեր-
պով անոր մասնաւոր յօդուածոց վրայ և
Սկիզբէն դժբաղդարար այն կերպով բռնվե-
ցաւ որ միշտ արգելքի մը պիտի զարնենք . քա-
նի անդամ որ մասնաւոր վիճարանութիւնն մը
սկսի ժողովը , տակէն ընդհանուր վիճարանու-
թիւնն մը երեւան պիտի ելնէ , ինչպէս որ հիմա-
ծողով թաղական մատակարարութիւնն ուլու-
խը կը քննէ , եւ ուրիշ մը նոր ծրագիր մը կը
սերէ : Ժողովը վստահութեամբ չ'է ուղեր ծր-
ագրին ընդհանուր վիճարանութիւնը մտնել ,
եւ մասնաւորին անցեր է : Երեմիա Սրբազնի
որած դիտօղութիւնը մասնաւոր է , իսկ Փա-
ռած դիտօղութիւնը մասնաւոր է ,

գլխաւոր յարմաքն թիւնն աղ անվազը և եկեղեց-
յականք՝ առ կրնան ժողովոյ ներկայ դատիլի
մինչդեռ կիրակի օրեկոր փրենց հօգեւոր պաշտաման
պարապելով ատեն չ'են ունենար ժողովին գալու բանահաջո — այս օքրայում

ԱԱԶԱՐՈՍԵԱՆ ՔՅ ԵՖ ԱԱ ԱԱԻԲՐԱՋՄԻՒ ՕՐԸ ՀԲԱ Ե
ՐԲԱԿԱ Հ ԱՐԱԲՈՒՆ Ն ԱՄԱՆ Ք ԹԵԼՈՐՈՎԻՄ Ա ԽԱՆԳՄԱԴԻ
ՆՈՒ ԻՐԵԱԼ ՕՐ ԱԾ Հ Է, ԱՋԼ ԱՐԹՈՐԻՆ ԳՈՐԾ Խ ԵԹԻ ԱՆԿԵՐ
ԼՐՆԱՆ ԿԱՍՏԱՐՎԻՄ Ա ՄԻԱՅՆ թէ Ե ՍԻՌԱԲԻՆ ԵԱՆ Է Փ Ի
ԸՍԱՃԻՆ ԱԿ Է Ն ԻՐԱԱՆ Պ ԻՇ ԱՆ Ն ԵՐԱԾ Ա Վ ԱՐԱԲԵՐԵԱԼ
Ե ւ այս կարդի աշխարհային գործերը չեն
լրնար տեսնիմ ։ ովհաղ պատ ։ այս այս մ ավ

ՓԱՓԱԶԵՍՆ Ս. ԷՅ. — Խնչպէս ասկէ առաջ
ալ առաջարկած եմ, նորին կը կըկնեմ որ ժողո-
վը փօփոխակի կիրակի եւ ուրբաթ օրերը դու-

առ զր նմիութեառմ ։ Եց ու ՄԱՏՍՈՂԱՑԱՐ
զգո պատուի այ ՈՉ արևա զբախ չափիա ու
• Ավելաց
առ զր չոք ոչ մօս ։ ԸՆԿԱՆ ՅԱՀԱՅ
ու կը մասի , արմանից զանայ լինութեան միա
մի մասէից պարախուան ։ Ո ամեն արդառանուան
արաւաք լինութ չողութ զարադարանաւ ամէ

Ա-րդեմ . — Այս ժԴ. նիստին՝ առաջին երեսին սկիզբը «Ատենապետ Օտեան Պ. էֆ» ըսվածը՝ պիտի ըլլայ «Ատենապետ Աղաքէկեան Ա. էֆ. (Փոխատենապետ)»։

մարդիկ որով եւ ոչ մէկան զրկանք, մ'եղած
կըլլաց ամ և մասնաւ չեմ պիտու ան

Ատենապետ է Փ. Ժողովին կը ծանուցնէ թէ Կիւ
միւշկէրտան Խուրէն եւ Տիգրան է Փակրը երեք
անգամ յաջորդաբար բացակայ գտնված են. Ժողո-
վին եւ հետեւաբար հրաժարեալ կը համարվին,
ըստ նախորդ որոշման Ժողովին :

Անեանը վերցաւ ժամ 14^{1/2} ին :

ԱՏԵՆԱՊԵ

ԱՆԵՍՏՊԻՐ

ՊԵ ՕՏԵԱՆ թի — ուշ ՌՈՒՍԻԱՆՆԱՆ՝
այս պատճեն ու ամերիկական գույքներուն
առևտություններուն մաքարդի առջևը առ
անդքի մասունք, որուն առաջ բխի մահը

մկրդը «Ատենապետ Օտեան Դ. Էֆ» ըսվածը
(Փոխաթե՛նապետ)»:

ԴԻՆ Տ ՂՐԱՄՆ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՄՆՏՈՒԿԻՆ

Կը ծախսի ի Դիւանուտան Պատրիարքարանի ի Ղարաթիա ,
եւ կը դափի ամեն դրավաճառ ոց քալի Եկեղեցեաց բանկողները .